Հավելված
ՀՀ փոխվարչապետի N 1061 - Ա
որոշման

ԾՐԱԳԻՐ

«ԵՊՀ-Ի ԿԱՄՊՈՒՍԻ, ԳԼԽԱՄԱՍԱՅԻՆ ՇԵՆՔԻ ԵՎ ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՑԻ ԱՐԴԻԱԿԱՆԱՑՄԱՆՆ ԱՋԱԿՑՈՒԹՅՈՒՆ»

1.	Ծրագրի նպատակը	Ծրագրի նպատակն է աջակցել Երևանի պետական համալսարանում (ԵՊՀ) իրականացվող արդիականացման գործընթացներին: Այդ գործընթացների շրջանակներում, որոնց մեկնարկը տրվել է ԵՊՀ հոգաբարձուների խորհրդի կողմից, նախատեսվում է իրականացնել համալսարանական տարածքի (կամպուսի) նախագծման, գլխամասային շենքի լուսավորության, գլխավոր մասնաշենքի 5-րդ և 6-րդ հարկերի ֆասադային մասում օդափոխության համակարգերի փոխարինման աշխատանքներ, ինչպես նաև ուսումնական գործընթացի արդիականացմանն ուղղված՝ ձեռք բերել 10 ինտերակտիվ հեղուկ բյուրեղային անհպում ցուցադրատախտակ (գրատախտակ) և մեկ Ֆորդ Տրանզիտ մինի ավտոբուս՝ նախատեսված թե՛ ուսանողներին պրակտիկայի վայրեր, և թե՛ պրոֆեսորադասախոսական կազմին Հայաստանի և Արցախի տարածքում արտագնա գիտաժողովների վայր տեղափոխելու համար:
2.	Ծրագրի բարեգործական որակման նպատակը	Օրենքով սահմանված կարգով օգտվել ՀՀ հարկերի, տուրքերի և պարտադիր վճարների գծով արտոնություններից:
3.	Բարեգործը	Հայկական բարեգործական ընդհանուր միություն (ՀԲԸՄ), 55 Արևելք, 59-րդ փող. Նյու Յորք, NY 10022-1112:
4.	Ծրագիրը կատարողը	Հայկական բարեգործական ընդհանուր միության (ՀԲԸՄ) Հայաստանի ներկայացուցչություն (ՀՀ, ք. Երևան, Բաղրամյան 40, ՀՎՀՀ 00006479):
5.	Ծրագրի իրականացման վայրը և բնագավառը	Հայաստանի Հանրապետություն, ք. Երևան, կրթություն:
6.	Ծրագրի բյուջեն	102 642 300 դրամ:
7.	Բարեգործությունն ստացողը	Երևանի պետական համալսարան հիմնադրամ (ՀՀ. ք. Երևան, Ալեք Մանուկյան 1, ՀՎՀՀ 01506928)
8.	Ծրագրի իրականացման տևողությունը	2021թ. դեկտեմբերի 30-ից մինչև 2022թ. օգոստոսի 31-ը:

9.	Միջոցառումների նկարագրությունը և ժամկետները, անհրաժեշտ ֆինանսական միջոցների ծավալը	Ծրագրի շրջանակներում նախատեսվում է -իրականացնել ԵՊՀ կամպուսի նախագծային աշխատանքները, որի մեկնարկը տրվելու է 2021թ. դեկտեմբերի 30-ին, ավարտը նախատեսվում է 2022թ. հուլիսի 31-ին՝ 15 000 000 դրամի չափով, -գլխամասային շենքի արտաքին լուսավորությունը: Մեկնարկը տրվելու է 2021թ. դեկտեմբերի 30-ին, և նախատեսվում է աշխատանքները ավարտել 2022թ. մարտի 31-ին՝ 6 218 400 դրամի չափով, -գլխավոր մասնաշենքի 5-րդ և 6-րդ հարկերի ֆասադային մասում օդափոխության համակարգերի VRF համակարգով փոխարինման աշխատանքները: Աշխատանքների սկիզբը նախատեսվում է 2021թ. դեկտեմբերի 30-ին, ավարտը՝ 2022թ. հունիսի 31-ին՝ 29 360 000 դրամի չափով: Ըստ այդմ, նշված գումարից 13 200 000 դրամի չափով արտերկրից ներկրվելու են VRF մուլտիզոնային օդորակման համակարգերը, իսկ 16 160 000 դրամի չափով ապրանքներ և տեղադրման աշխատանքներ են ձեռք բերվելու տեղական մատակարարից: -10 CleverTourch Impact Series Gen 2 86” ինտերակտիվ հեղուկ բյուրեղային անհպում ցուցադրատախտակի ձեռքբերում՝ պատին փակցնելու հարմարանքով, որոնք անհատույց նվիրիաբերվելու են Երևանի պետական համալսարանին՝ դասասենյակներում տեղադրվելու և դասապրոցեսների մեջ օգտագործվելու համար: Ցուցատախտակները հնարավոր է ձեռք բերել միայն պատշտոնական ներկայացուցչի միջոցով: Նշված ցուցադրատախտակների և պատին փակցնելու հարմարանքների արժեքը կազմում է 24 063 900 դրամ: Նախատեսվում է, որ ցուցատախտակները Երևան կբերվեն 2022թ. հունվարի 10-ից հետո: -«Ֆորդ Տրանզիտ» l7+1 (2,2l հզորությամբ շարժիչով, դիզելային վառելիքով աշխատող) մինի ավտոբուս, որը նախատեսվում է ձեռք բերել 2022թ. ապրիլ ամսին՝ 28,000,000 դրամի չափով:
10.	Ձեռք բերվող (ներմուծվող) ապրանքների ու ծառայությունների համառոտ նկարագիրը, ծավալները և նախատեսվող գինը	-ԵՊՀ կամպուսի նախագծային աշխատանքներ «ՍՊ2» ՍՊԸ-ից (ՀՎՀՀ 00930516)՝ 15 000 000 դրամ առանց ԱԱՀ, -ԵՊՀ գլխամասային շենքի արտաքին լուսավորության սարքավորումների ձեռբերում և տեղադրում «Բոֆֆո» ՍՊԸ-ից (ՀՎՀՀ 00121699)՝ 6 218 400 դրամ առանց ԱԱՀ,

		- ԵՊՀ գլխավոր մասնաշենքի 5-րդ և 6-րդ հարկերի ֆասադային օդափոխության VRF մուլտիզոնային օդորակման համակարգերի ներկրում արտերկրից՝ 13 200 000 դրամ առանց ԱԱՀ, - ԵՊՀ գլխավոր մասնաշենքի 5-րդ և 6-րդ հարկերի ֆասադային օդափոխության առկա համակարգը VRF մուլտիզոնային օդորակման համակարգերի փոխարինում, և անհրաժեշտ դետալների ձեռքբերում «Վակա-կլիմա» ՍՊԸ-ից (ՀՎՀՀ 00870049)՝ 16 160 000 դրամ առանց ԱԱՀ, -Հայաստանում «Քլեվերթաչ» ընկերության տարածաշրջանային պաշտոնական ներկայացուցիչ «Ֆիրմա Ալֆա» ՍՊԸ-ից (ՀՎՀՀ 01204713) ձեռք բերել 10 CleverTourch Impact Series Gen 2 86” ինտերակտիվ հեղուկ բյուրեղային անհպում ցուցադրատախտակ պատին փակցնելու հարմարանքով, որոնց ընդհանուր արժեքը կազմում է 24 063 900 դրամ առանց ԱԱՀ: -Հայստանում «Ֆորդ» ընկերության պաշտոնական ներկայացուցիչ «Ֆորա» ՍՊԸ-ի միջոցով «Ֆորդ Տրանզիտ» l7+1 մինի ավտոբուս ձեռք բերում (քննարկվում է նաև ներկրման հնարավորությունը), որի արժեքը կազմելու է 28,000,000 դրամ առանց ԱԱՀ:
11.	Ծրագրի իրականացման հետ կապված կազմակերպական ծախսերը	Ծրագրի իրականացման հետ կապված կազմակերպչական ծախսեր չեն նախատեսվում:
12.	Համագործակցությունը պետական կառավարման, տեղական ինքնակառավարման մարմինների և այլ մարմինների հետ	Չի նախատեսվում:
13.	Ծրագրի արդյունավետության նկատմամբ վերահսկողության մեխանիզմների նկարագրությունը	Հաշվետվություն ներկայացնել ՀՀ կառավարության 2003թ. հունվարի 16-ի N 66-Ն որոշմամբ հաստատված բարեգործական ծրագրերը բարեգործական որակելու և գրանցելու կարգի 25-րդ կետով սահմանված կարգով:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՓՈԽՎԱՐՉԱՊԵՏ Հ. ՄԱԹԵՎՈՍՅԱՆ

30.12.2021
ՀԱՎԱՍՏՎԱԾ Է
ԷԼԵԿՏՐՈՆԱՅԻՆ
ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅԱՄԲ